*րի և իմ անմոռանալի բարեկամիս կամքին։ Այսուհետև երբ կառավարութեան հաշիւս հրատարակելով ես այլ ևս կատարած իմ համարում իմ իբրև կտակակատարի գործունէութիւնս՝ ինձ մնում է ցանկալ, որ այն հաստատութիւնները, որոնք այսուհետև պիտի գործադրեն կտակի մնայուն տնօրէնութիւնները՝ աշխատեն ճշտութեամբ գործադրել հանգուցեալ Յ. Իզմիրեանցի կտակը, որպէս զի կատարելապէս արդիւնաւոր լինի նա և դարեցդար անմահ պահէ Յ. Իզմիրեանցի յիշատակը, որին նա արժանի է թէ իւր կենդանութեան ժամանակ արած բազմաթիւ բարեգործութիւններով և թէ մահից յետոյ թողած ազգօգուտ կտակով։*

Կտակակատար ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆ։

Հոկտ. 8 ին. 1889

Պ. Բուրգ.

---

## ԿԱՐՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՄՆԵԱՑ ՀԱՇԻՒԸ 188$^{6}/_{7}$, 188$^{7}/_{8}$ ԵՒ 188$^{8}/_{9}$ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1886 *Թուի Օգոստոսի* 3 *ին տեղւոյս Հայ հասարակութիւնը ընտրեց մեզ քաղաքիս եկեղեցական-ծխական դպրոցների հոգաբարձու։ Նախ քան պաշտօնավարութիւն սկսելը՝ մենք տեղեկացանք որ մեր խնամոցը յանձնուող դպրոցները ոչինչ դրամ չունին պահեստի մէջ, ուստի և դժուար էր այդպիսի հանգամանքներում ուսումնարան կառավարելը. այդ իսկ պատճառաւ Կարսի Հայ հասարակութիւնը ինքնայօժար ստորագրութեամբ խոստացաւ որոշ քանակութեամբ նուէրներ տալ ուսումնարաններին յընթացս երեք տարւոյ։ Այդ նուիրատուութեանց համար կազմուած ժապաւինեալ մատենի մէջ նուիրատուները սեպհական ստորագրութեամբ պարտաւորուած էին խոստացեալ դրամը վճարել. բացի դորանից ցանկանալով որ տեղւոյս հայ ծառայող դասակարգն ևս անմասն չմնայ դպրոցների նիւթական դրութեանը օժանդակելու գործում, ըստ մեր հասկացողութեան, կազմեցինք նոցա անուանական ցուցակը և որոշեցինք նոցանից իւրաքանչիւրի վճարելիքը, և թէև երկու անգամ դիմելով խնդրեցինք այդ նպաստն, բայց համարեա թէ ոչինչ չստացանք։ Սրա հետ ներկայացրած ցուցակից երևում է, որ բոլոր նուիրատուներից յընթացս մեր եռամեայ պաշտօնավարու-*

թեան ստացուելու էր 9246 րուբլի, որից ժողովրդի վրայ ապառիկ է մընում 6343 րուբլի 50 կոպէկ. Միանուագ ստորագրութեամբ առանձին մատենով խոստացել էին նուիրել 432 րուբլի, բայց վճարել են 382 րուբլի, իսկ 50 րուբլի մնում է ապառիկ. դրա ցուցակն գրուած է նուիրատուութեանց ցուցակի վերջում. Բացի այդ՝ կտրօնաւոր ցուցակով ստացուած է միանուագ նուէր 79 րուբլի, այնպէս որ միանուագ նուէրների քանակութիւնն է (բացի պ. Մանուկ Գրիգորեանցից ստացուած 32 րուբլին)—461 րուբլի. Այստեղ մէջ ենք բերում գպրոցների եռամեայ մուտք և ծախուց ցուցակը.

| | | ր. | կ. |
|---|---|---|---|
| 1. | Թատրոնական ութն ներկայացումներից ստացուած է | 956 | 3 |
| 2. | Եռամեայ ստորագրութեամբ ժողովուած նուէրներ, միանուագ նուէրներ և պ. Մանուկ Գրիգորեանի մօտից ստացուած 32 րուբլի, որ չէ յայտնի ումից է ստացուած, ընդամենը *). . . . . . . . | 3404 | 20 |
| 3. | Փաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցուց ստացուելու էր նպաստ 1200 րուբ. և կրպակներից 1050 ր. ընդամենը 2250 րուբլի, սակայն ստացուել է միայն . . . | 833 | 75 |
| | | 5193 | 98 |
| 4. | Թոշակագրամ ժողովուած է . . . . . | 5654 | » |
| 5. | Տեղւոյս Ս. Նշան եկեղեցուց ստացուել է . . . | 500 | » |
| 6. | Ննջեցելոց յիշատակին նուէրներ և դիակառքի վարձ . | 111 | » |
| 7. | Սարիղամիշից փոխ-գնդապետ Յովհաննիսեանի ղրկած 67 րուբ. և հասարակութիւնից ժողոված 40 րուբ. 40 կոպ. | 107 | 40 |
| 8. | Ժողովուած է «Լուսոյին», մի անգամ . . . | 106 | 15 |
| 9. | Մանկ. մատենադարանի արդիւնքից (այդ դրամից գնուել են երկու պահարաններ) . . . . . | 95 | 85 |
| 10. | Կովկասի Հայ. Բարեգործ. Ընկ. Խորհրդի մօտ պահուած 5000 րուբլու տոկոսիք երկու անգամ . . . | 725 | » |
| 11. | Կարսի հայ երկրագործներից ժողովուած է նուէր. . | 20 | 90 |
| 12. | Գէորգ աղայ Բարայեանից՝ մօր յիշատակի համար տարեկան խոստացած 100 րուբլուց . . . . | 100 | » |

(*) Ժողովրդից ստացուած նուիրատուութեանց ցուցակով ժողովուած նուէրն է 2917 ր. 50 կ. որ միանուագ ժողովուած 461 րուբլու հետ կանէ 337 րուբ. 50 կ. տարբերութիւն կազմող 25 ր. 70 կոպէկն յայտնի չէ ումնից է ստացուած.

| | | | |
|---|---|---|---|
| 13. | Ծննդական վկայականներից (որոնք տպուել և ծախուել են դպրոցի հաշուով) | 30 | • |
| 14. | Օրիորդաց ձեռագործի՝ տարւոյս Յունիսի 18ին կայացած վաճառումից ստացուած է | 254 | 50 |
| | Մուտքի ընդհանուր գումարն է՝ տասներկու հազար ութն հարիւր իննսուն ութն րուբլի եօթանասուն ութն կոպէկ։ | 12898 | 78 |

Այդ մուտքը կազմել է այսպէս.

| | | |
|---|---|---|
| $188^6/_7$ թ. մուտքն եղել է | 4101 | 5 |
| $188^7/_8$ թ. մուտքն եղել է | 3824 | • |
| $188^8/_9$ թ. մուտքն եղել է | 4973 | 73 |
| | 12 898 | 78 |

ԾԱԽՔ.

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ուսուցչաց և վարժուհեաց եռամեայ ռոճիկն | 11·000 | 10 |
| 2. | Ուսումնարանի ծառային 30 ամսուայ ռոճիկ | 321 | • |
| 3. | Դպրոցների վերանորոգութեան և կարկատանների համար | 323 | 73 |
| 4. | Ուսուցիչներ հրաւիրելու և զանազան թղթակցութեանց ծախս | 36 | 55 |
| 5. | Վառելափայտ և կոտրելու վարձ | 300 | 90 |
| 6. | 26 հատ նորնստարան, 6 գրատախտակ, 2 կարկին փայտէ, գրատախտակների նորոգութեան, ներկ և այլն | 274 | • |
| 7. | Ձեռագործի նիւթերին վճարուած է | 161 | 86 |
| 8. | Հողաբարձական քարտուղարին | 150 | • |
| 9. | Աշակերտաց տեղեկագրի տպագրութեան ծախք | 41 | 56 |
| 10. | Մանր ծախքեր՝ ցուցակներ, կաւիճ և այլն | 92 | 23 |
| 11. | Հաշուի տպելու համար լրագրին, ծննդ. վկայականներին և դպրոցի կնիքը փորագրելու համար | 31 | 23 |
| 12. | Րաֆֆու Թաղմանը պսակ (18 րուբ.) 60 օր. «Վարդան» գրքոյկը աշակերտներին ընծայելու համար | 21 | • |
| 13. | Գրադարանի համար 2 պահարան, սեղանի ծածկոց 3 արշին մահուդ, 3 ջրաման (փայտէ մուլուխ) | 83 | 35 |
| 14. | Թոշակագրամի աւելորդ կտրօն Օր. Սարուխանեանցի և 11 քեչայ՝ միջնորմների համար | 21 | 50 |
| 15. | Վարժուհու օգնականուհի Օր. Բոստանճեանցին երկամեա աշխատութեան նուէր մի հատ ոսկեայ ժամացոյց | 38 | • |
| 16. | Հարցաքննական մատեաններ | • | 90 |
| | Ծախքի գումարն է՝ տասներկու հազար ութն հարիւր իննսուն եօթն րուբլի իննսուն և մէկ կոպէկ | 12897 | 91 |

Վերոյիշեալ ծախսը եղել է այսպէս

| | | |
|---|---|---|
| $188^{6}/_{7}$ ուսումն տարւոյ ընթացքում ծախսուել է . | 3793 | 65 |
| $188^{7}/_{8}$ թուում . . . . . . . | 3874 | 73 |
| $188^{8}/_{9}$ թուում . . . . . . . | 5229 | 53 |
| Գումարն՝ | 12897 | 91 |

Տախքը դուրս գալով մուտքից՝ աւելանում է միմիայն ութսուն եօթն կոպէկ, որպիսին և սրա հետ ներկայացւում է Նոր Հոգաբարձութեանը։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԵՆ.

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Եռամեայ և միանուագ նուիրատուների վրայ մնում է ապառիկ (առանձին ցուցակով) . . . . | 6378 | 50 |
| 2. | $188^{6}/_{7}$ ուսումնական տարւոյ թոշակագրամի ապառիկից մնացած է (առանձին ցուցակով) . . . . . | 82 | » |
| 3. | $188^{7}/_{8}$ և $188^{8}/_{9}$ ուսումնական տարիների թոշակագրամից ապառիկ մնացած է (առանձին ցուցակով) . . | 326 | » |
| 4. | Ս. Նշան եկեղեցւոյ վերջին մի տարւայ նպաստագրամից մնացած է ստանալու . . . . . . | 100 | » |
| 5. | Յունիսի 18ին ձեռագործի վաճառումից զանազան անձանց վրայ ապառիկ է մնացել (առանձին ցուցակով) . . | 58 | » |

Այստեղ չենք հաշւում Ս. Աստուածածին եկեղեցւոյ պարտ նպաստագրամներն։

Գումար պահանջն է՝ վեց հազար ինն հարիւր քառասուն չորս րուբլի յիսուն կոպէկ . . . . . 6944 50

Դրանից ի զատ առանձին ցուցակաւ մնացած են ձեռագործներ, որոնք և յանձնուած են այժմեան վարժուհի տիկին Գայիանէ Ստամբօլցեանցին, որը և ստացման մասին ստորագրել է ձեռագործի մնացորդի համար կազմած ցուցակի վրայ։

Այս հաշուի հետ կցուած է և Հոգաբարձութեանս եռամեայ պաշտօնավարութեան ընթացքում ունեցեալ մատեանների, գործերի և կահկարասեաց ցուցակ (առանձին ցուցակով)։

Իսկ ինչ վերաբերի ուսումնարանական գրադարանի և չքաւոր մանուկներին ձրիապէս դասական պիտոյքներ մատակարարելու համար ուսումնարանում հիմնուած մանկական գրավաճառանոցի հաշիւներին՝ այդպիսիքը յանձնուած լինելով ուսուցչական ժողովի խնամատարութեանը, դոցա հաշիւներն ևս գտնւում են ուսուցչական ժողովի ձեռքում։ Նախագահ Հոգաբարձութեան՝ Յուսիկ վարդապետ, Նախկին Հոգաբարձուք՝ Ա. Սաֆարեանց, Միրիմանով, Գ. Բահաթրեանց։

Ընդ իսկականին ուղիղ է՝ Քարտուղար Հոգաբարձութեան՝

ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱՌԱՆԿՈԶԵԱՆՑ.